



**ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱՄԱԿԸ
ՈՒՂՂՎԱԾ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՌՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ**

Հայաստանյաց Սուրբելական Ս. Եկեղեցու հնավանդ սովորության համաձայն, Գերագույն Հոգիոր Խորհուրդը որոշել է 1955 թվականի սեպտեմբերի 25—30-ը Մայր Արքու Ս. Էջմիածնում հրավիրել ազգային-եկեղեցական ժողով՝ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք-Կարողիկոսի ընտրության համար. ժամանակն է վերացնելու Հայաստանյաց Սուրբելական Ս. Եկեղեցու դարավոր կենտրոն Մայր Արքու Ս. Էջմիածնի Հայրապետական Արքոնից սպիտեական շղարշը, որը ծածկվել է երշանկանիշտառակ և հավետ ողբացյալ նօրին Ս. Օծուրյուն Տ. Տ. Գեղրդ Զ. առաքելաշավիդ Հայրապետի մահից հետո, և ընտել արժանավոր նոր Գահակալ:

Հանգուցյալ Վեհափառի մամր սպացին մեր Եկեղեցու բոլոր սրտացալ հավատացյալները: Հանգուցյալ Վեհափառը, յուրահատուկ խոհեմուրյամբ, զգաստ ու իմաստում դեկալարությամբ, իրատես ու ողջամիտ ազգային-եկեղեցական բաղադրամային ժողովրդացի ու հայրենանվեր գործունեությամբ նոր ու խոստումնալից էջ բացեց մեր ազգային-եկեղեցական նոր տարեգրության մեջ՝ Հայաստանյաց Եկեղեցու համար:

Մեռավ Գահակալը, բայց կանգուն է Գահը: Վեհափառի մահով չի ալլարտվել Մայր Արքու Ս. Էջմիածնի պատմական դերը հայ կյանքում: Ս. Էջմիածինը հազարամյակներով հայ ժողովրդի համար հանդիսացել է մի Արքություն Մրցոց, մեր ժողովրդի ամենանվիրական ուխտավայրերից հնագույնն ու համազգայինը, որի պատմությունը, գոյուրյունը սերտորեն կապված է եղել հայ ժողովրդի կյանքի պատմության ողջ գոյուրյան հետ: Ս. Էջմիածնի անունն ու խորհուրդը նվիրական ու բանկ է եղել ամեն մի հավատացյալ հայ սրտի համար: Հայ հավատացյալ ժողովուրդը, իր հոգու բովանդակ չերմությամբ, ազգային-եկեղեցական հպատակության ամենավառ, սրտազին ու սիրաշատ զգացմունքներով է կապվել Ս. Էջմիածնի հետ, որովհետև հայ ժողովուրդը Ս. Էջմիածնի հարազատ զավակն է, երա հոգեւոր ծնունդը: Ահա թե ինչո՞ւ Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունը միշտ էլ հանդիսացել է մեծ ու պատմական իրադարձություն մեր ազգային-եկեղեցական կյանքում:

Ուրախ ենք ազգային, որ մեր ազգային-եկեղեցական պատկառելի ժողովը տեղի պիտի ունենա այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ միշազգային բաղադրամային հորիզոնի վրա եւեռում են մնայուն խաղաղության առաջին

ու խոստումնալից ծիլերը: Տա՛յր Ամենակալը, որ չորս մեծերի քանակցությունները շոշափելի եիմքերի վրա դնեին ցանկալի և սուրբ խաղաղությունը:

Մայր Արքո Ս. էջմիածնի համար 1955 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները հանդիսանալու են, արդարե, հավետ անմռանալի և հոգեու միմիրառության պատմական օրեր:

Համաձայն 1945 թվականի Ազգային-եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրության, որը խտացումն էր Հայաստանյաց Առաքելական Ս. եկեղեցու ոգու և սկզբունքների, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությանը իրավասու են մասնակցելու մեր եկեղեցու հավատացյալ ողջ զավակները՝ իրենց ընտրած եկեղեցական և աշխարհական պատգամավորներով: Հրահանգվում է ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրությունը կատարել ըստ վերև հիշված կանոնադրության:

Ազգային-եկեղեցական այդ պատկառելի և սրբազնությար ժողովի անդամ են՝

- ա) Ս. էջմիածնի Գերագույն Հոգեուր Խորհրդի անդամները.
- բ) Մեծի Տաճա Կիլիկիո Կարողիկոսը իր եպիսկոպոսներով.
- գ) Երուսաղեմի և Կոստանդնուպոլիսի Պատրիարքները իրենց եպիսկոպոսներով.
- դ) Հայոց եկեղեցու բոլոր առաջնորդները և առաջնորդական փոխանորդները.
- ե) Ս. էջմիածնի, Մեծի Տաճա Կիլիկիո, Ս. Երուսաղեմի, Կոստանդնուպոլիսի Պատրիարքության միաբանություններից մեկական ներկայացուցիչ.
- զ) Եկեղեցական ժողովուրդն իր ընտրած մեկ կամ ավելի պատգամավորներով: (Մինչև 25.000 ժողովուրդ ունեցող քեմք ընտրում է 30 տարին լրացրած մի պատգամավոր: Յուրաքանչյուր քեմք ընտրում է այնքան պատգամավոր, որքան անգամ 25.000 ժողովուրդ պատուեալում է իր մեջ: Վերջին 25.000-ը կարող է լրիվ շինել, բայց ոչ պակաս 10.000-ից):

Ազգային-եկեղեցական ժողովի թեմական պատգամավորների ընտրության մասնակցում են հոգեուրականները և բաղադաշխական շափահատություն ունեցող մեր եկեղեցու զավակ հանդիսացող աշխարհական իրավասու ծխականները:

Պատվիրակները պատգամավորին կարող են ընտրել իրենց միջից կամ դրսից:

Անհրաժեշտ է շտապ ձեռնարկել ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրության և ընտրվածների անունը, հայրանունը և ազգանունը հայտնել մեզ՝ դիմելու բարեխնամ կառավարության՝ վիզաների իրավունք ստանալու:

Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրության առքիվ ծագած ամեն տարակուանենքների համար կարելի է դիմել նամակով կամ հեռագրով Ս. էջմիածնի Գերագույն Հոգեուր Խորհրդին:

Հաս հնավանդ սովորության, այս անգամ ևս, մեր աշխարհական և եկեղեցական պատգամավորները ընտրված կիմնեն լավագույն, ազեիլ, բարի, նշմարտապես եկեղեցասեր և զերմ հավատացյալ ծխականներից, որոնք վայելում են իրենց ժողովրդի, քեմքի վստահությունը, համակրանքն ու մեծարանքը:

Գերագույն հոգեոր Խորհուրդը վստամ է, որ Ա.ԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ, ՍՐՏԱՌՈՒԻՉ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄՔ, ԱՅՍ ԸՆՏ-ԲՈՒԹՅԱՆ ՄԵԶ եՎՍ ԿԴՐՍԵՎՈՐԵՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՄՔԻ, ԶԳՏՈՒՄՆԵՐԻ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆԱԿԱ-ՆՈՒԹՅՈՒՆԸ: Ա.ԶԳԻ, ԺՈՂՈՎՐԴԻ, ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒԹԻՉԴՆԵՐԻ, ՄԵՐ ՄԻ-ՐԵԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀԱՐԱԳՈՍ ՈՐԴԻՆԵՐԻ ՊԱՏՎԻ, ԽՂՋԻ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ԵԿԵՂԵՑԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆ Է — ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱԶԻ ՎՐԱ ԸՆՏՐԵԼ ԱՅՆՓՈՍԻ ՄԵԿԻՆ, ՈՐ ՎԱՐ ՊԱԶԻ ԲՈՎԱՆԴԱԿ ՀԱՅՈՒ-ԹՅԱՆ ՀՈԳՈՒՄ ՄԵՐ ՆԱԽՆՅԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ԷՇՄԻԱՇՆԱՍԻՐԱԿԱՆ ՈԳԻՆ ՈՒ ԲՈՑՎԱՌ ԶԳԱՅՑՈՒՆՔԸ, ԸՆՏՐԵԼ ԱՅՆՓՈՍԻ ՄԵԿԻՆ, ՈՐ ԱՅՍՈՐՎԱ-ԲԱՐԴ ՈՒ ԴԺՎԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԵՆԱ ԲՈՐՋՐ ՊԱԶԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅ Ա.ՊԱ.ՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՐԱՎՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽՆՄԵՆՎՐ ԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀՄԱՅՔԸ, ԿԱՐԵՆԱ ԽՈՐԱՑՆԵԼ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՄԻԶԵՎ ՍՐՏԱԳԻՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱՌ Ա.ԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵ-ՑԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԸ ԵՎ ՆԱԽՆՅԱՅ ՈԳՈՒՆ ԵՎ ՕՐԻՆԱԿԻՆ ՆԱԽՆԶԱ-ԽՆԴԻՐ ԼԻՆԻ, ԱԶՔԻ ԼՈՒՅՍԻ ՊԵՍ ՊԱՀՓԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ Ա.ՊԱ.ՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ Ա.ՊԱ.ՔԵԼԱՀԱՍՏԱՏ ՈՒ ԼՈՒՍՎԱՎՈՐԶԱՀԻՄ ԿԱՐԳՆ ՈՒ ԿԱՆՈՆԸ, ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ Ա.ԶԳԱՅԻՆ ՍՐԹԱԳՈՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԵՐ Ա.ԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽԵԲՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ Ա.ԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՈՒՂՂԱՓՈՒԹՅՈՒՆԸ, ԺՈՂՈՎՐԴՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԱՇԽԱՏԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԵՐԲԵՔ ՍԵՐՏԱՑՆԵՐԸ, ԵՎ ԷՇԽԱՏԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԵՐԲԵՔ ՍԵՐՏԱՑՆԵՐԸ:

ՄԵՐ պատգամավորության պարտիք է կազմակերպված անցկացնել հայ-րապետական այս ընտրությունը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ընդհանրության և հայ հավատացյալ ժողովրդի միասնականության վեհ ու սրբազն սկզբունքներով, պատմական այդ ընտրությունը վերածել հայ ժո-ղովրդի միասնականության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միու-րյան սրտառուշ տոնի, հայ ժողովրդի սիրո, հարգանքի, երախտագիտության, խմբվածության տոնի՝ մեր Մայր Եկեղեցու և երա նոր ու արժանավոր Հով-վապետի շուրջը, որպեսզի մի անգամ ևս ողջ աշխարհով մեկ հոշակի, որ ՄԻ է ՀԱՅՈՑ Ա.ՊԱ.ՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄԻ է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ-ԹՅՈՒՆԸ:

Հայրապետական ընտրությունից և օծումից հետո, հոկտեմբերի 4-ին, նշանակված է նորընտիր և նորած Հայրապետի անդրանիկ մեծահանդես հայրապետական բուրգ պատարագն ու եպիսկոպոսական առաջին ձեռնա-դրության շնորհարաշխության հանդեսը:

Հատ գեղեցիկ և համբուրելի սովորության համաձայն, նորընտիր Հայ-րապետը պետք է կատարի եպիսկոպոսական ձեռնադրություն, իր հայրապե-տական բարձր գեահատության և բազալերանին արժանացնելով մեր այն առաջնորդներին և կոասակրոն եկեղեցականներին, որոնք իրենց եկեղեցասեր և հայրենասեր գործունեությամբ, իրենց քեմերի ազգային-եկեղեցական կյան-քի կազմակերպվածությամբ, իրենց ժողովրդի ցանկությամբ արժանացել են եպիսկոպոսության բարձր և պատասխանառու աստիճանին:

Ուրախ ենք արձանագրելու, որ այսօր էլ մեր հոգեւորականության շար-քերում ունենք մի շարք արժանավոր հովիվներ և առաջնորդներ, որոնք, վրա-տան ենք, որ կարժանանան նորընտիր Հայրապետի բարձր գեահատության:

Մի երրորդ հոգեոր ուրախություն էլ վերապահված է մեր պատգամավոր-երին և ուխտավոր հայ ժողովրդին. որոշվել է հոկտեմբերի 8-ին, Մրցոց

Թարգմանչաց տոնին, կատարել Մայր Արքուն Սրբակա Մեռնի օրինություն:

Սրբակա Մեռնի օրինությունն էլ հայ ժողովրդի սրբին մոտիկ ամենաշխատական ու համաժողովրդական, ազգային-եկեղեցական մեծաշուր ու խորհրդավոր տոնակատարություններից մեկն է, որի նմանը չկա հայ ժարդու համար ոչ մի տեղ և ոչ մի առքիվ:

Այս ուրախ առքիվ հայ հավատացյալ ժողովուրդը հրավիրվում է գլեպի հանուց Հայատանյաց Մայր Արքոր՝ հանդիսատես ու տոնակից լինելու Սրբակա Մեռնի մեծագույն և խորհրդավոր հանդեսի կատարմանը:

Ու կզա հայ ուխտավոր մարդը հեռու թե մոտիկ զաղութերից, ծունկ չունելու Ս. էջմիածնի հազարամյա քարերի ու մեռնադրոշմ սրբությունների առաջ, կզա համբուրելու հայրենի հողը, որի տերն է այսօր հայ աշխատավոր մարդը:

«Մեր հախնյաց և մեր ներկա Սրբության Սրբոց՝ հայ քրիստոնյա մարդու կուտ Տաճար՝ Մայր Արքու Ս. էջմիածները իր սրբություններով և մեր ներկա Մայր Հայրենիքը՝ իր պատմական հուշարձաններով, որպես մազեխասկան ուժ, կրեւեն տարաբնակ և նեռաբնակ հայ ժողովրդի ներկայացուցիչներին ու կհամախմբեն պատմական Տաճարի շուրջ, հայրենի կարուն առնելու...» (Գեղրգ. Զ.):

Հոգեւոր ուրախության այդ օրերին, մենք լիահույս ենք, որ հայ հավատացյալ մարդը՝ հավատով զինված, իր հախնյաց կրոնասեր ու կրոնազզած ոգով ներշնչված կկատարի որդիական իր բարոյական պարտքը Ս. էջմիածնի հանդեպ: Հին, ավանդական սովորության համաձայն, Սրբակա Մեռնի օրինության առքիվ կատարվելիք ընթացիկ ծախսերը՝ միշտ էլ ցանկացել է հոգալ հավատացյալ հայ ժողովուրդը, ԴԱՐԹԱՍ ուղարկելով Մայր Արքու: Վստան ենք, որ այս առքիվ էլ, հայ հավատացյալ ժողովուրդը բաց կանի իր սրբի և խակի բերանը... Մեծատանն ու ունենոր կտան իրենց հարուստ ժամկից, իսկ աշխատավորն ու արհնեստավոր մարդը՝ իրենց «այրի կնոշ երկու լուման»: Քանակը չէ այնքան կարևոր, որքան այն սերն ու պատրաստակամությունը, որով տրված է այդ նվիրատվությունը Հայ Եկեղեցու կարիքների համար:

Պատգամավորները կարող են իրենց հետ քերել այն սրտազին ու սիրաշատ նվիրատվությունները, որոնք կլինեն Մայր Արքուի պայծառության համար:

Օրինյա՛լ լինի նվիրատունների կյանքը և օրինյա՛լ հայ ժողովուրդը:

Ազորե՛նք Ամենակարողին, որ իր հովանի բազուկը տարածի միշտ հայ երկրի վրա, զորացնի հայ ժողովրդին, արիացնի հայ հոգևորականությանը՝ իրենց նվիրական պարտքը կատարելու հանդեպ իրենց Ազգի, մեր փառապան Հայրենիքի և Հայատանյաց Առաքելական Ս. Եկեղեցու:

ԳԵՐԵԳՈՒՅՑՆ ՀՈԳԵՎԱՐՄ ԽՈՐՃՈՒՐԴ

18 օգոստոսի 1955 թ.

Ս. Է Զ Մ Ի Ա Շ Ի Ն

